

**ՔԱՆՁԱՐԱՐՈՍՏԱՆԱՅԻՆ ՄՇԱԿԱՐՈՒՅՍԵՐԻ ԳՈՒՄԱՐԱՅԻՆ β -ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՍԱԿԱՅԱՆԻ ՇՐՋԱԿԱ ՏԱՐԱԾՔՈՒՄ**

ՀՀ ԳԱՍ Գ.Ս. Դավթյանի անվան հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտ

Հայկական ատոմային էլեկտրակայանին ՀԱԷԿ հարող տարածքի Մեծամոր գետի ջրով ոռոգվող գորշ կարբոնատային հողերում մշակված մի քանի բանջարաբոստանային մշակաբույսերի (սամիթ-*Anethum* L., վարունգ-*Cucumis sativus* L., կանաչ լոբի-*Phaseolus* L., կարտոֆիլ-*Solanum tuberosum* L. կաղամբ-*Brassica capitata* L), ռադիոէկոլոգիական մաքրության համեմատական բնութագիրը կազմելու համար դրանցում որոշվել է զուևարային β -ակտիվությունն և այդ զուևարում հաշվարկվել ^{90}Sr -ի և ^{137}Cs -ի մասնաբաժինները: Պարզվել է, որ բուսատեսակները, ըստ զուևարային β -ակտիվության մեծության, կազմում են հետևյալ շարքը՝ վարունգ>սամիթ>նեխուր>ծմերուկ>կանաչ սոխ=ամսաբողկ=կանաչ լոբի=կարտոֆիլ>կաղամբ, իսկ ըստ զուևարային β -ակտիվության մեծ ^{90}Sr -ի և ^{137}Cs -ի մասնաբաժնի՝ կաղամբ>վարունգ>ամսաբողկ>նեխուր=ծմերուկ>սամիթ>կանաչ սոխ>կանաչ լոբի>կարտոֆիլ: Սա պայմանավորված է ինչպես այլ բազմաբնույթ գործոնների ազդեցությամբ, այնպես էլ առանձին բուսատեսակների կենսաբանական յուրահատկություններով: Այսպես, կաղամբի β -ակտիվության 10,4%-ը պայմանավորված է ամենավտանգավոր համարվող ^{90}Sr -ի և ^{137}Cs -ի մասնաբաժնով, իսկ կարտոֆիլի նույն ցուցանիշը կազմել է ընդամենը 2,7%: Հավանաբար, մշակաբույսերի զուևարային β -ակտիվության մնացած՝ 89-97,3%-ը պայմանավորված է ուրիշ բնական և արհեստական ռադիոնուկլիդների պարունակությամբ, որոնցից ամենամեծ ռադիոակտիվություն ունի ^{40}K -ը: Կարևոր է նշել նաև, որ թեև կանաչ սոխը, ամսաբողկը, կանաչ լոբին և կարտոֆիլը զուևարային β -ակտիվությամբ չեն տարբերվել միմյանցից, սակայն կարտոֆիլը ռադիոէկոլոգիապես ավելի մաքուր կարելի է համարել, քան մնացածները՝ զուևարային β -ակտիվության մեծ ^{90}Sr -ի և ^{137}Cs -ի ամենափոքր մասնաբաժին ունենալու շնորհիվ:

Եզրակացություն: ՀԱԷԿ-ին հարող տարածքի բանջարաբոստանային մշակաբույսերի ռադիոէկոլոգիական մաքրության բնութագրման համար կարևոր ցուցանիշ է համարվում ոչ միայն ընդհանուր β -ակտիվությունը, այլ նաև այդ զուևարում ^{90}Sr -ի և ^{137}Cs -ի մասնաբաժնի չափը:

Ghalachyan L.M., Avetisyan M.M.

SUM β -ACTIVITY IN MELONS AND GOURDS IN THE AMBIENT AREA OF ARMENIAN NUCLEAR POWER PLANT

G.S. Davtyan Institute of Hydroponics Problems NAS RA

Summary

Sum β -activity in plants, grown in grey carbonate soil and irrigated by water of the Metzamor River in the ambient area of ANPP, was studied. The unit of artificial radionuclide has also been calculated. According to β -activity the plants are of the following line: cucumber> fennel> celery>watermelon>green onion=radish= green bean=potato>cabbage and according to ^{90}Sr and ^{137}Cs unit: cabbage>cucumber>radish>celery=watermelon> fennel>green onion> green bean>potato. It turned out that β -activity as well as the unit amount of ^{90}Sr and ^{137}Cs in that sum is a significant scale characterizing the radio ecological pureness of plants.